ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ա. ԳԳՐՈՑՆԵՐ

Շուշի քաղաքում եւ Վարանդայում կան հետեւեալ դպրոցները.

	Հիմնարկութեան տարեթիւը	Դասարանների թիւը	Ուսուցիչներ. Միմիայն կրթ. գործով	Ուսուցիչներ. Միմիայն տնտեսական	Սովորող. Հայ	Սովորող. Ռուս	Սովորող. Վրացի	Սովորող. Թուրք	Սովորող. Ազգութեամբ	Սովորող. Հոգեւորական	Սովորող. Գաղտագողի	Սովորող. Վերցրածի	Սովորող. Ընդհանրապես	Սովորող. Դրսից բերուած դեռ	Ամբողջ թիւը	Ամբողջ թիւը
Հայոց թեմական	1843	VI	4	12	550	—	—	—	39	45	322	183	550	547	14843	14843
Ռէալական. . . .	1881	VII	7	16	252	12	5	47	121	8	136	51	316	161	35413	35413
Գաղաքային . . .	1875	III	—	9	131	4	—	36	44	7	21	29	171	354	10399	8326
Թուրքերի դպրոց.	1896	I	—	4	—	—	—	209	53	6	246	4	209	—	2510	2510
Հինգ միդաեան աղայոց մասնաւոր ուսումնարան.	—	—	—	5	276	2	—	13	7	9	275	—	291	—	10000	10000
Բոլորը. . .	—	—	11	46	1209	18	5	305	264	75	1070	267	1437	1062	73165	71092
Օրիորդաց Մարիամեան արքունական ուսումնար. .	1894	IV	—	10	137	12	1	—	30	8	212	—	250	—	4610	4610
Ընդամէնը .	—	—	11	56	1346	30	6	405	294	83	1282	267	1687	1062	77775	75602
Նոր-Գաղաթ, Սարուշէն և Վարանդայ գիւղերում եկ. ծխ. ուսումն.	1890	I	—	3	267	—	—	—	—	5	—	262	267	—	1800	1800

Այս աղիւսակից հետևում է.

ա. Այժմեան դպրոցների մէջ ամենահինը Հայոց Հոգևոր թեմական դպրոցն է։

բ. Ամենից շատ աշակերտներ ուսանում են Հոգևոր դպրանոցում։

գ. Արհեստաւոր, հոգևորական և գիւղական դասակարգերի որդիները առաւելապէս սովորում են Հայոց թեմական դպրանոցում, իսկ ազնուական դասակարգինը՝ ռէալականում։

դ. Ռէալական դպրոցը իւր ամէն մի աշակերտի համար ծախսում է 112 ր., քաղաքականը՝ 49 ր., Հայոց թեմականը՝ 27 ր., ռուսաց օրիորդաց դպրոցը՝ 18 ր., Թուրքերինը՝ 12 ռուբլի։

ե. Որովհետև սովորելու շրջանում գտնուողների թիւը յայտնի չէ, ուստի չի կարելի հաշուել, թէ սրանց որ տոկոսն է սովորում. միայն ընդունելով, որ մօտաւորապէս բնակչութեան 20% գտնւում է այդ հասակում, կարելի է ասել, որ հայերից 52, իսկ Թուրքերից 22% է սովորում։

Բ. ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Շուշում Հայոց Բարեգործական Ընկերութեան տեղական ճիւղը ունի գրադարան-ընթերցարան, որ հիմնուել է 1889 թուի մարտի 10-ին։ Ունի կանոնադրութիւն 14 §§-ից բաղկացած, որը օրինաւոր հաստատութեան է ենթարկուած Հ. Բ. Ընկ. Թիֆլիսի Խորհրդի կողմից։

Գրադարան-ընթերցարանից օգտուելու համար վճարում են. ունևորները՝ տարեկան 4 ռուբլի, ամսական 50 կոպ., օրական 5 կ., չունևորները՝ տարեկան 1 ր. 50 կոպ., ամսական 20 կ., օրական 2 կոպէկ։ Գրքեր կամ ամսագրեր տուն տանելու համար գրաւական է պահանջւում։

Գրադարան-ընթերցարանը առաջին տարին ունեցել է ընդամէնը 587 կտոր գիրք։ Հետզհետէ աւելացնելով՝ այսօր գրադարանն ունի մօտ 4000 կտոր գիրք՝ 6000 ռուբ. արժողութեամբ։ Ընթերցարանն էլ շարունակ ստանում է պարբերական հրատարակութիւններ՝ հայերէն և ռուսերէն լեզուներով։ Առաջին տարում ստացել է 17 պարբ. հրատարակութիւն, իսկ այժմ ստանում է 30։ Ունի կահկարասիք մօտ 350 ռուբ. արժողութեամբ։

Գրադարանը չունի ձեռագիրների բաժին։ Գրքերն էլ միայն հայերէն և ռուսերէն լեզուներով են։

1889 թուի մարտի 10-ից մինչև 1896 թ. յունուարի 1-ը գրադարանից օգտուել են.

	I տարի 1889	II տարի 1890	III տարի 1891	IV տարի 1892	V տարի 1893	VI տարի 1894	VII տարի 1895	Ընդհանուր գումար
Տարեկան անդամներ.	9	1	4	3	5	6	9	37
Ամսական »	161	216	228	230	233	359	395	1822
Օրական »	270	423	323	306	246	327	344	2239
Եօթ տարուայ ընթացքում օգտուել են .	—	—	—	—	—	—	—	*) 4098
Գրքեր և ամսագրեր են տարուել կարդալու.	1834	2631	3353	4202	3506	5371	6723	**) 27620

Եօթ տարուայ ընթացքում ունեցած անդամների թուի՝ 4098-ի վրայ եթէ աւելացնելու լինինք և ընկերութեան յաճախորդ անդամների թիւը, հաշուած միջին թուով տարեկան 50 հոգի, կ'ստանանք 4448 թուանշանը. հետևապէս և գրադարան-ընթերցարանից օգտուողների թիւը տարեկան եղել է, միջին թուով, մօտաւորապէս 635.

Գրադարան-ընթերցարանից օգտուողները բաժանւում են. ըստ ազգութեան՝ հայեր—85%, ռուսներ—8%, թուրքեր—4% և այլազգիներ 3%. ըստ դասակարգի՝ ուսումնառուներ (ուսանողներ, աշակերտներ և աշակերտուհիներ)—55%, առևտրականներ—25%, աստիճանաւորներ—10%, ուսուցիչներ և վարժուհիներ 7%, արհեստաւորներ 3%.

Կանանց բացակայութիւնը նկատելի է. դրանց յաճախորդների թիւը մի շատ աննշան տոկոս է կազմում՝ այն է 2%...

Աւելի շատ կարդացուել են հետևեալ հեղինակների աշխատութիւնները, որոնց դնում ենք այստեղ ըստ առաւելութեան.

---

*) Այդ գումարի մէջ չեն մտնում ընկերութեան անդամները, որոնցից յաճախորդների թիւը տարեկան մօտաւորապէս 40—60 է հասնում.

**) Այդ գումարի մէջ չեն մտնում ընթերցարանում կարդացուած գրքերը և ամսագրերը.

Հայերէն՝ Րաֆֆի, Պռոշեան, Արովեան, Շիրվանզադէ, Ծերենց, Աղայեան, Շէքսպիր, Լօժէն-Սիւ, Դիւմա, Ժիւլ-Վերն, Շիլլեր, Պարոնեան, Սունդուկեան, Խրիմեան, Մօլիէր, Շահազիզեան, Գամառ-Գաթիպա և Լէօ Ռուսերէն՝ Тургеневъ, Толстой, Жюль-Вернъ, Гоголь, Лермонтовъ, Пушкинъ, Диккенсъ, Достоевскій, Шпильгагенъ, Гончаровъ, Гаршинъ, Зола, Островскій, Гюго, Додэ, Бѣлинскій, Байронъ, Мольеръ, Шекспиръ, Шиллеръ, Гёте, Сенкевичъ և Чеховъ.

Առաջ բերելով հեղինակների անունները, տեսնում ենք, որ ընթերցողների շրջանը մեծ մասով բելլետրիստ հեղինակների գրքեր է կարդացել՝ միանգամայն անուշադիր առնելով գրականութեան և այլ ճիւղերին պատկանող գրքերը։ Վերջիններովս հետաքրքրուողները մի շատ աննշան կօնտինգենտ են կազմում։

Ի դէպ, գրադարանը, կարելի է ասել, բաւական հարուստ է գիտական գրքերով։

Պարբերական հրատարակութիւններից (ամսագիրներից) առաւելապէս կարդացուել են՝ հայերէն՝ «Մուրճ», «Փորձ», «Արաքս», «Տարազ», «Հանդ. գրակ. և Պատմ.», ռուսերէն՝ „Вѣстникъ Европы“, „Артистъ“, „Сѣв. Вѣстникъ“, „Русская Мысль“, „Книжки Недѣли“, „Міръ Божій“, „Русское Богатство“.

Եկամտի կողմից գրադարան ընթերցարանը այնքան էլ նախանձելի չէ։ Եօթ տարուայ ընթացքում մուտք է ունեցել ընդամէնը 1151 ռուբլի 92 կոպ., մինչդեռ ծախք ունեցել է 6328 ռուբ. 64 կոպէկ։ Դէֆիցիտը՝ այն է 5176 ռուբ. 72 կոպ. ծածկուել է ընկերութեան Վարչութեան ունեցած եկամտի միւս աղբիւրներից,— անդամակցական վճարներից, նուէրներից, ներկայացումներից և այլն։

Բացի ընկերութեան գրադարան-ընթերցարանից, Շուշու կլուբը ևս ունի մի հարուստ գրադարան-ընթերցարան, որից նոյնպէս բաւական օգտւում են թէ հայերը, թէ ռուսները և թէ թուրքերը։

Ի նկատի պիտի առնենք նոյնպէս Հոգևոր թեմական և բէալական դպրոցների գրադարանները, որոնցից օգտւում են դոյն դպրոցների աշակերտները, ուսուցիչները և մասամբ՝ կողմնակի անձինք։

Թումեան

Դ. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի քաղաքում եւ գաւառում ստացուել են.

	Արձագանք	Մշակ	Մուրճ	Նոր-Դար	Տարազ	Զանազան	Ռուսերէն	Ընդամենը
1894 *թուին.* .	25	58	7	82	16	188	412	600
1895 „ . .	38	63	5	92	21	219	475	694
1896 „ . .	33	59	6	66	18	149	523	672
Ընդամէնը .	96	180	18	240	55	536	1410	1966
Միջին թւով .	32	60	6	80	18	179	470	655

Այս աղիւսակից հետեւում է.

ա. Շուշում ամենից աւելի տարածուած է «Նոր-Դար»-ը, սակայն հետզհետէ պակասել է.

բ. «Նոր-Դար»-ից յետոյ աւելի տարածուած է «Մշակը», որ հետզհետէ աւելացել է.

գ. Ռուսաց թերթերը աւելի և աւելի տարածւում են, և մինչև անգամ աւելի քան հայկականը.

դ. Հազար հոգուց միայն 19 հոգի են թերթ ստանում.

Դ. ԹԱՏՐՈՆ

Շուշում առաջին ներկայացումը տեղի է ունեցել դեռ վաթսունական թուականներին, երբ հայրենիք վերադարձած ուսանողները ոչ միայն տղամարդու, այլ և կանանց դեր են կատարել. Այնուհետև թեմական դպրանոցի ուսուցչական խումբը և շրջիկ դերասանները ներկայացումներ են տուել թեմական դպրանոցի դահլիճում, որ բաւական ընդարձակ է. Սակայն թատրոնը այստեղ կանոնաւորուել և իւր կրթիչ ազդեցութիւնը օր աւուր աւելացրել է, երբ 1891 թուին շինուել է պ. Ն. Խանդամիրեանցի թատրոնական շէնքը.

Սա թէև արտաքուստ և կամ ներքուստ ճարտարապետական և կամ գեղարուեստական մի առանձին նշանակութիւն չունի, սակայն իւր ընդարձակ դահլիճով, բաւական յարմարաւոր բեմով ու երկար ֆուայէնով, միանգամայն բաւականացուցիչ է Շուշուայ պէս մի գաւառական քաղաքի համար. Ունի նաև բաւական դեկորացիաներ, մի բաւական ճաշակով նկարուած վարագոյր և այլն.

Թատրոնի բացման օրից մինչեւ այժմ եղել են.

1891	թուին	13	ներկայացում,	4030	ր. մուտք
92	»	19	»	5100	» »
93	»	20	»	5694	» »
94	»	19	»	4824	» »
95	»	24	»	7014	» »
96	»	24	»	6700	» »
Ընդամէնը . .		119	»	33362	ր. մուտք
Միջին թուով .		20	»	5560	» »

Այսպէս ուրեմն՝ տարեկան միջին թուով տրւում են 20 ներկայացում, իւրաքանչիւր ներկայացման տոմսակ է վաճառւում 278 ր., որից դուրս գալով ծախսը, մօտաւորապէս 128 ր., զուտ արդիւնք մնում է 150 բուբլի։ Բոլոր տոմսակները ծախուած դէպքում մուտք է լինում 325—350 բուբլի։

Ե. ՑՊԱՐԱՆՆԵՐ

Քաղաքումս կայ երկու տպարան. մինը Հայոց հոգևոր տեսչութեան, որ բացուած է Բաղդասար միտրապօլիտի ջանքով 1830-ական թուականներին։ Մամուլը բաւական փոքր է և բազմատեսակ տառեր չունի։ Այնքան անկանոն են պահւում գործերը, որ հակառակ մեր բոլոր ջանքին, չկարողացանք իմանալ թէ մինչև այժմ այդտեղ քանի գիրք են տպուած։

Միւսը Ա. Մահտեսի-Յակոբեանինն է։ Սա բացուած է 1877 թուի նոյեմբերին. ունի բաւական լաւ մամուլ և նոր ձևի տառեր։ Մինչև ներկայ թուականը տպուած է 83 գիրք, հետևապէս և՛ տարեկան միջին թուով 4 գիրք, որ շատ քիչ է։

Զ. ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Հետևեալ աղիւսակը ցոյց է տալիս թէ վեց տարուայ ընթացքում որքան ոճրագործութիւններ են կատարուել Շուշում.

Թուին	Սպանութիւն		Ինքնասպանութ.		Պատահակ. մահ	
	Հայ	Թուրք	Հայ	Թուրք	Հայ	Թուրք
1890	1	2	1	—	—	1
1891	1	3	1	—	2	2
1892	1	7	1	—	1	1
1893	1	3	1	—	2	2
1894	2	5	2	—	—	2
1895	1	4	1	—	2	4
Ընդամէնը	7	24	7	—	7	12

Այս աղիւսակից հետևում է.

Հայերի և Թուրքերի սպանութեան թուերը յարաբերում են միմեանց, ինչպէս 1:3,5, մինչդեռ այդ երկու խմբերի թուական յարաբերութիւնը համարեա հաւասար է 2:1.

Անձնասպանութիւնը բացառապէս հայերին է յատուկ, որ կուլտուրական աւելի բարձր կեանքի մի յատկանիշ է։

Միւս ոճրագործութիւնները, ինչպէս վիրաւորել, ծեծել և այլն նոյնպէս Թուրքերի մէջ են աւելի պատահում։

Հետևեալ աղիւսակում բերուած է Շուշու և Զիբրայիլի *) գաւառների այդ երկու ժողովուրդներից բանտարկուածների թիւը։

Թիւ	Հայեր		Թուրքեր	
	Ար.	Իգ.	Ար.	Իգ.
1890	92	1	524	2
1891	68	3	651	12
1892	52	2	459	—
1893	98	—	696	5
1894	62	1	369	2
1895	56	3	423	3
Ընդամէնը	428	10	3122	24

„Кавказскій календарь"-ի 1896 թուի համաձայն այս երկու գաւառների հայերի ընդհանուր թիւն է 94,750, Թուրքերինը՝ 91,916։ Այսպէս՝ մինչդեռ երկու աղգաբնակութիւններն էլ համարեա հաւասար են միմեանց, Թուրք ոճրագործների թիւը համարեա 7 անգամ աւելի է հայ ոճրագործների թուից **)։

*) Այդ գաւառում առանձին բանտ չկայ։

**) Այս տեղեկութիւնները ուրիշ մի քանի տեղեկութիւնների հետ միասին տուել է մեզ բժիշկ պ. Բահաթրեանը, որին խորին շնորհակալութիւն ենք յայտնում։

Է. ՓՈՍՏ

Պէտք է ասել, որ արդէն քաղաքացիները մեծ կարիք են զգում փոխանակ շաբաթական երեք անգամի, ամենայն օր փոստ ունենալու և կանոնաւորուած տեսնելու նամակների ցրումը, որ շատ անկանոն կերպով է կատարւում։—Ցրիչը մարդկանց, երեխաների, ծառաների մի ահագին խմբի հետևողութեամբ հանդիսաւոր կերպով իջնում է փոստատնից դէպի Թոփխանան և մտնելով քաղաքային ժողովարանի բակը, բարձրանում է պատշգամբը, իսկ հետևողները մնում են ներքևում։ Ցեռոյ բարձր ձայնով կարդում է բոլոր լրագիրների և հասարակ նամակների հասցէները և շպրտում որ կողմից որ «ինն» է հնչում։ Այսպիսով՝ բացի այն որ շատ նամակներ կորչում են, այլ և բոլորը իմանում են, թէ ովքեր նամակներ ունին։

Հետևեալ ադիւսակը ցոյց է տալիս փոստի գործունէութիւնը, որից հետևողութիւններ հանելը թողնում ենք իրեն ընթերցողին։

Փ Ո Ս Տ

	Փոստ		Հասարակ նամակներ					Դրամական և արժէքաւոր ծրարներ			Ծանրոցներ (посылки)			Վերադիր վճարով				Հեռագիրներ					Մուտք		Ելք	Փոխ
	Ուղարկուած	Ստացուած	Փակ Վճարուած	Փակ Անվճար (տարբեր.)	Փակ Թերի	Լրագրերի կապոցներ (Бандероли)	Վարդ. տարբեր. հրատար. (шт.)	Ապահովուած կապոցներ	Գումար	Արժէք	Արժէքաւոր Գումար	Արժէքաւոր Արժէք	Արժէքաւոր Քանակը	Ուղարկուած ծանրոցների մէջ կալին վերադիր վճարով Գումարը	Ուղարկուած ծանրոցների մէջ կալին վերադիր վճարով Արժէքը	Ուղարկուած ծանրոցների մէջ կալին վերադիր վճարով Քանակը	Ստացուած ծանրոցներ Գումարը	Ստացուած ծանրոցներ Արժէքը	Ստացուած ծանրոցներ Քանակը	Սակագրի վերադրեալ (ТФ-ФИКЫ)	Սակագրի վերադրեալ Արբանեակներ	Սակագրի վերադրեալ Նոցնտ	Սակագրի վերադրեալ Ընդամենը	Սակագրի վերադրեալ Սակագրի վերադրեալ հեռագրերի վերադրեալ	1) Փոստից 2) Ներքին հաղորդակ. հեռագր. 3) Միջազգային հաղորդակ. հեռագր.			
Տեղական 1890. . .	—	—	53	36	2	—	—	5	8	856	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1) 18399			
Տեղական 1895. . .	—	—	65	—	—	—	—	16	102	6275	—	—	—	*)	—	—	—	—	—	—	—	—	—	20527			
Գալարութեան մէջ																											
Ուղարկուած 1890. . .	—	—	59882	21318	1773	27	—	11861	5737	4114557	2148	89866	38	—	—	—	—	7926	565	—	—	99804	2) 7340			
Ուղարկուած 1895. . .	—	—	125927	2476	3412	276	—	13361	7476	4420971	1700	35844	—	91	5	927		10204	986	—	—	112240	8162			
Ստացուած 1890. . .	269	264	59586	21438	1791	4292	59893	11652	10430	1345058	3929	12652	696	—	—	—	1,232,115	8863	256	2,871 13,544	21,208 37,640	—	3) —	25,739 29,616	10,316 11,060	
Ստացուած 1895. . .			70265	22076	6014	8227	68399	11335	12652	1377104	2868	91437	908	624	412	15162		11482	331			—	927			
Միջազգային																											
Ուղարկուած 1890. . .	—	—	1216	—	29	—	—	367	21	1354	2	35	—	—	—	—	—	355	1	—	—	3293				
Ուղարկուած 1895. . .	—	—	2072	—	42	7	—	411	212	8225	3	14	—	—	—	—	—	522	4	—	—	5052				
Ստացուած 1890. . .	—	—	1861	—	63	317	12	335	4	311	3	63	1	—	—	—	—	369	6	—	—	3822				
Ստացուած 1895. . .	—	—	2682	—	116	1730	—	346	5	33753	4	2140	—	—	—	—	—	547	20	—	—	6162				

*) Չէր ընդունուում.

Ը. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Շուշին փոստային ճանապարհներով կապուած է Գորիսի և Անդրկովկասեան երկաթուղու Բագու-Թիֆլիսեան գծի Եւլախ կայարանի հետ։ Շաբաթական երեք անգամ օմնիբուս է գնում և գալիս Շուշից Եւլախ, անցնելով ճանապարհը մօտ 11 ժամուայ ընթացքում։



ՎԱՐԱՆԴԵՑԻ ՀԱՅ ԳԵՂՋԿՈՒՀԻ

Քաղաքում կան «Նադեժդա» և «Ռոսսիյսկոյէ» հաղորդակցութեան ընկերութիւնների գրասենեակները, որոնք կատարում են ապրանքների տեղափոխութիւնը։

Քաղաքի և գիւղերի, ինչպէս և միւսյն գիւղերի մէջև չկան կանոնաւոր ճանապարհներ, և քիչ տեղեր են սայլեր բանում։ Սովորական գործածական կենդանիներն են՝ էշը, ջորին և ձին։